ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

20.04.2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ
ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ

ՆԱԽԱԳԱՀ Ա.Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՍԵՐԱՄԱՐՏԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Առաջարկվող համակարգը նպատակ ունի սուսերամարտի ազգային հավաքականների կազմավորման գործընթացը ճիշտ կազմակերպելու:

Միավորները տրվում են Հ. Ս. Ֆ. Կողմից օրացուցային պլանով հաստատված բոլոր մրցումների ընթացքում:

Ցանկացած մրցաշար ունի իր աղյուսակը և գործակիցը:

<Բ> կարգի են համարվում այն մրցումները որին մասնակցում է հինգ պետություն:

Վեց և ավելի պետության մասնակցության դեպքում փոխվում է միավորների բաշխման աղյուսակը:

Մրցումներում ձեռքբերված միավորները գործում են աշխարհի առաջնությունից մինչ և հաջորդ աշխարհի առաջնություն ընկած ժամանակահատվածում:

Հ Հ մեծահասակների առաջնությանը կարող են մասնակցել Հ Հ քաղաքացիություն ունեցող 14- 30 տարեկան մարզիկ-մարզուհիները:

Պատանիների, երիտասարդների, մեծահասակների եվրոպայի և աշխարհի առաջնությունների ժամանակ 1-32 երրորդ տեղերը գրված մարզիկների միավորները գրանցվում են որպես նոր մրցաշրջանի ելակետային միավոր:

Միավորների առաջարկվող համակարգը նույնն է բոլոր տարիքային խմբերի համար:

Միավորները տրվում են առաջին փուլը հաղթահարած մարզիկին՝ ըստ աղյուսակի:

Առաջին փուլը չհաղթահարած մարզիկի միավորներից կհանվի 15 միավոր:

Մրցումներում ձեռք բերված միավորները գործում են՝ բոլոր տարիքային խմբերի համար համապատասխան աշխարհի առաջնությունից հաջորդ աշխարհի առաջնությունն:

Պատանի մարզիկը բոլոր տարիքային մրցումներում ձեռք բերած միավորները գրանցում է իր հաշվին:

Երիտասարդ մարզիկը երիտասարդների և մեծահասակների մրցումներից միավորներ է գրանցում իր հաշվին:

Մեծահասակ մարզիկները միավորներ են գրանցում միայն իրենց տարիքային մրցումներից:

Աշխարհի առաջնությունից հետո նոր մրցաշարրերին մասակցելու համար հաշվի են առնվում՝

1.Սուպերամարտի Հայաստանի նախորդ առաջնության արդյունքները, որոնք գործում են մինչև նոր մրցումներ:

2.Հավաքական թիմի վերջնական կազմի քննարկմանն ու հաստատմանն կարող են մասնակցել միայն Հ.Հ. սուսերամարտի ֆեդերացիայի մարզիչները:

3.Հավասար միավորներ հավաքած մարզիկների հարցը քննարկում է տվյալ զենքաձևի մարզչական խորհուրդը, <ամեն կազմակերպությունից մեկական ներկայացուցիչ> և տվյալ զենքաձևի ավագ մարզիչը:

4.Քննարկմանը մասնակցող մարզիչների ձայնը գնահատվում է 1 <իսկ ավագ մարզչինը՝ 1.5 ձայն:

5.Երևան քաղաքի առաջնության վաստակած միավորները հաշվի են առնվում միայն Երևանի թիմերի մեջ, բացառություն այն դեպքի, եթե այն բաց առաջնություն է:

Եթե մարզիկը մասնակցել է իր հաշվին միջազգային մրցումներին հավաքաքան թիմի հետ և վաստակել է միավորներ, դրանք ամրագրվումեն, եթե ոչ ապա չեն ամրագրվում:

Այն մարզիկները, որոնք կընդգրկվեն հավաքական թիմ կազմում և անհարգելի պատճառով չեն մասնակցի ու.մ.հ. -ի մարզումներին և մրցումներին, կվորակազրկվեն մեկ տարով:

Հավաքական թիմի կազմը որոշելուց հետո, եթե մարզիկը հիվանդության կամ այլ հարգելի պատճառով չի կարող մասնակցել հավաքներին կամ մրցումներին նրան փոխարինում է տվյալ զենքաձևում միավորներով նախորդող մարզիկը: Տվյալ կազմակերպությանների ներկայացուցիչները իրավունք չունեն փոխելու իրենց մարզիկին մեկ այլ զենքաձևի մարզիկով:

Մրցումների ժամանակ մարզիկների, մարզիչների և մարզադպրոցների տնօրենների կողմից կատարած կոպիտ խախտումները, վիճաբանությունները պետք է կանխվեն գլխավոր մրցավարական հանձնաժողովի կողմից և անհրաժեշտության դեպքում ենթարկվեն կարգապահական տույժերի:
Հավաքական թիմին մրցաշարում ուղեկցում են՝

1.<u>Տվյալ զենքաձևի ավագ մարզիչը՝</u>
- <u>անհրաժեշտության դեպքում</u>

ա/ Բոլոր զենքաձևերում քանակային առավելություն ունեցող կազմակերպության մարզիչը:
բ/ Տվյալ զենքաձևում արաջին համարի մարզիկի մարզիչը:

Թիմի կազմը հաստատվելուց հետո՝ այն ենթակա չէ փոփոխման, բացառությամբ արտակարգ դեպքերի (հիվանդություն, մնասվածք և այլ):

Ընդունված որոշումը ներկայացվում է ֆեդերացիայի նախագահին և հաստատվում նրա կողմից:

ՏԵՂԵՐ	Բ/Մ	Երևան Քաղաք	Հ.Հ. Գավառ	Հ.Հ. Առաջնություններ	Բ կարգի	Սատելիտ Միջազգ	Ա Կարգի Երիտաս	Ա Կարգի Մեծահաս	Աշխարհ Եվրոպա Բոլ.տարիք
1	32	16	24	32	32	40	50	60	100
2	26	13	19.5	26	26	35	45	55	90
3	20	10	15	20	20	30	40	50	80
5	14	7	10.5	14	14	20	30	40	70
6	12	6	9	12	12	15	25	30	60
7	10	5	7.5	10	10	12	20	25	50
8	8	4	6	8	8	10	15	20	40
9/16	6					8	10	15	30
17/32	4					6	8	10	20
33/64	2					4	6	8	10

Եթե մրցումների մասնակիցների քանակը չի գերազանցում 32-ը, ապա միավորները տրվում են 1-8-րդ տեղերը գրաված մարզիկներին:

Եթե տվյալ մրցաշարի մասնակիցների քանակը գերազանցում է 32-ը, ապա միավորները տրվում են 1-16-րդ տեղերը գրաված մարզիկներին:

Մրցաշարում 64-և ավելի մասնակիցների դեպքում միավորները տրվում են **ըստ աղյուսակի**:

Այն կազմակերպությունը, որը կհեռացնի իր մարզիկներին ծրագրված միջոցառումներից, կվորակազրկվի տվյալ պահից մեկտարի ժամկետով:

Ընդունված կարգում փոփոխություններ կարելի է կատարել մրցաշրջանի ավարտից հետո, մարզչական խորհրդում քննարկելուց և գրավոր կերպով առաջարկվող փոփոխությունները Հայաստանի սուսերամարտի ֆեդերացիա ներկայացնելուց հետո:

Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման պահից: